

–Քուկին ինչ վատ ըլլալդ ամեն մարդ գիտէ:

–Վատը դու ես...:

Ծեծկուրքը կսկսի, ապտակ եւ կից փոխանակուիլ կը սկսին:

Երրորդ մը կու գայ եւ կմիջամտէ...:

–*Բանթալօնի* մը համար կը վայլէ՞ որ...:

–Վա՛տ ըսաւ ինձի:

–(*Ականջն ի վար*) Դու ալ այդ աւանակին խօսքին կարեւորութիւն մի՛ տար:

–Ան ալ ինծի անպիտան ըսաւ:

–(*Ականջն ի վար*) Ամօթ է, այդ իշուն խօսքերուն կարեւորութի՞ւն կու տաս: (*Բարձր*) Հաշտուեցե՛ք, եղբայր էք դուք... Բայց այս *բանթալօնի* խնդիրը ի՞նչպէս ծագեցաւ:

–Վարժարանի վրայ խօսք բացուեցաւ...:

–Վարժարանին *բանթալօն*՝ պիտի հագցունէիք, ինչ պիտի ընէիք որ...:

–Չէ, տեսուչը...:

–Առնենք, եղբայր, առնենք, տեսուչին *բանթալօն* մը առնենք, ի՞նչ կ'ըլլայ եղեր:

–Չես հասկնար, եղբա՛յր, խնդիրը վարժարաններու վրայ էր:

–Վարժարաններո՞ւ համար կը վիճաբանէիք:

–Այո՛:

–Դուք երկուքնիդ ալ աւանակ էք եղեր... վարժարանի մը համար իրարու սիրտ կոտրել ի՞նչ պիտի ըլլայ. ես ալ կարծեցի, որ օգտակար բանի մը համար կը վիճէիք... ա՛յ աւանակներ:

Վիճաբանողներն այս դիտողութիւնն իրաւացի կգտնեն, կգղջան, որ չնչին խնդրոյ մը համար զիրար վիրաւորած են, կպագտուին, կհաշտուին եւ ուխտ կ'ընեն, որ մէյ մ'ալ վարժարանն իրենց բերանը չառնեն:

Թաղականի կռիւները հոս պակաս չեն: Երբ թաղական խորհրդոյ ընտրութեան ձեռնարկուի՝ մարդուն մէկը Դիոգինէսի լապտեր մը կ'առնէ երեք հազար հոգիէն ինը հոգի գտնելու համար, եւ դարձեալ ջաջողի: Թաղական ըլլողն կա՛մ վեց ամիսէն հրաժարական կու տայ եւ կամ իւր անկողինը Թաղական խորհրդարանը կ'փոխադրէ: